
ՀՆՉԱԿԵԱՆ ՔՍԱՆ ԿԱԽԱՂԱՆՆԵՐՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ*

ԵՂԻԿ ՃԷՐԷՃԵԱՆ (ՊԷՅՐՈՒԹ)

1915 Յունիս 15-ին 20 հնչակեաններ դատական վճիռով կախաղան կը հանուին Կ.Պոլսոյ Սուլթան Պայագիտ հրապարակին վրայ: Ասոնցմէ զատ տարբեր վայրերու մէջ 35-է աւելի ձերբակալուած հնչակեաններ, դատական վճիռով կամ մինչեւ դատարանին վճիռը, մահուամբ կը պատժուին:

Հնչակեաններու հանդէպ գործուած այս ոճիրը մէկ մասն էր շատ աւելի մեծ ոճիրի մը՝ Հայկական Յեղասպանութեան, որուն առաջին հանգրուանն էր հայ ժողովուրդը անճիտել իր առաջնորդող միտքէն: Հնչակեան Կուսակցութեան ղեկավարութիւնը բացառութիւն չէր կրնար ըլլալ եւ ան եւս կը դառնայ նոյն վայրագ ծրագիրին զոհը: Իր ընդհանրութեան մէջ այս տրամաբանութիւնը ճիշդ կը թուի: Սակայն այդ ճիշտ է իր ընդհանրութեան մէջ: Որովհետեւ այս մօտեցումը շատ մը կարեւոր հարցերու պատասխան չի տար: Հայ մտաւորականութեան զանգուածային ձերբակալութիւնն ու արքայը կը սկսի 1915 Ապրիլ 24-ին, մինչդեռ հնչակեաններուն ձերբակալութիւնները կը սկսին 1914 Յուլիս 17-ին՝ աւելի քան 9-ը ամիս առաջ. հայ մտաւորականութեան հետ հարցաքննութիւն ու դատավարութիւն տեղի չ'ունենար եւ անոնք կը սպաննուին կարելի եղած չափով աչքերէ հեռու. մինչդեռ հնչակեան գործիչները կ'ենթարկուին հարցաքննութեան, բանտարկութեան, անոնց հանդէպ կ'արձակուի դատական վճիռ եւ անոնք կախաղան կը բարձրացուին հրապարակայնօրէն:

Այս ու նման հարցեր յստակ կը դարձնեն, որ Հայկական Յեղասպանութեան հեռապատկերին վրայ Քսան Կախաղանները կը ներկայացնեն մասնայատուկ պարագայ մը եւ այդ պէտք է ընկալուի, քննարկուի եւ գնահատուի իր իւրայատկութեան մէջ:

Յստակ է որ, Օսմանեան Կայսրութեան տարածքին ծայր առած հնչակեաններու ձերբակալութեան (մօտաւորապէս 120 հոգի) պատճառը 1913 Մեպտեմբեր 7-10 Ռումանիոյ Կոստանցա քաղաքին մէջ կայացած ՄԴՀԿ 7-րդ Համագումարին առած որոշումներն էին: Համագումարը առած էր կազմակերպչական (վերադառնալ ընդդատակեայ գործունէութեան), մարտավարական (որդեգրել պայքարի յեղափոխական ձեւեր) եւ քաղաքական (պաշտպա-

նել Բնքնավար Հայաստանի գաղափարը) արմատական որոշումներ: Առաջին հարցը, որ կը ծագի այն է՝ ի՞նչ պատճառներէ թելադրուած հնչակեանները կը հասնին նման արմատական եզրայանգումներու, երբ 1913 Սեպտեմբերի դրութեամբ հայ ազգային-քաղաքական միտքը շատ հեռու էր նման տրամադրութիւններէ եւ միտումներէ:

Պարզ է, որ քաղաքական այսպիսի որոշումներ չեն կրնար մէկ օրէն միւսը, պահի ազդեցութեան տակ առնուիլ: Այս պարագային եւս արմատական այս կեցուածքին պատճառները ետ կ'երթային շուրջ 20 տարի, այսինքն մինչեւ ՄՂՀԿ – Երիտթուրք յարաբերութիւններուն սկիզբը:

ՄՂՀԿ – Երիտթուրք յարաբերութիւնները կը սկսին 1890-ականներու սկիզբները, Փարիզի մէջ, վտարանդիութեան պայմաններուն տակ: Մինչեւ 1895, այդ յարաբերութիւնները, «լայնախոհ հակառակորդութեան հողի վրայ» էին, «երբ առաջին պատեհ առթիւ կրքերը բորբոքեցան եւ «թշնամական» յարաբերութիւնները սկիզբ առան», – կը գրէ Հնչակեան Կուսակցութեան այդ շրջանի յայտնի ղեկավարներէն Ստեփան Սապահ Գիւլեան¹: Պատճառը Բարեկարգումներու Մայիսեան Ծրագիրն էր: Սուլթան Ապտուլ Համիտ, Պերլինի դաշնագրի 61-րդ յօդուածին նման, կը փորձէր մոռացութեան մատնել հայկական նահանգներուն վերաբերեալ 1895 Մայիս 11-ի բարեկարգութիւններու ծրագիրը: Բարեկարգումներուն գործադրութեան պահանջքով 1895 Սեպտեմբեր 18-ին Հնչակեան Կուսակցութիւնը Կ.Պոլսոյ մէջ կը կազմակերպէ Պապ Ալիի յայտնի ցոյցը: Սա կը ջղագրգռէ արտասահմանի երիտթուրք ղեկավարները: Վերջիններս կը պնդէին թէ Օսմանեան Կայսրութեան մէջ հարկաւոր է ընդհանուր բարեկարգութիւն, որուն համար ընդդիմադիր բոլոր ուժերը պէտք է համախմբուին: Անոնք արմատապէս դէմ էին մասնակի բարեկարգումներու սկզբունքին: Մինչդէռ հնչակեանները, համաձայն ըլլալով հանդերձ ընդհանուր բարեկարգութեան, կը գտնէին, թէ հայութիւնը կը գտնուի ճնշման եւ հարստահարման մասնայատուկ իրավիճակի մը մէջ, ուստի ան կարիքը ունի իր դրութիւնը փոխող շուտափոյժ եւ մասնայատուկ բարեփոխումներու: Սա Իթթիհատ–Հնչակեան առաջին տարակարծութիւնն էր, սակայն ոչ ամենակարեւորը:

Երկու կուսակցութիւններուն միջեւ էական իրամատը օսմանիզմի գաղափարն էր: Օսմանիզմ ըսելով՝ երիտթուրքական շարժման առանցքային կուսակցութիւնը դարձած Իթթիհատ Վէ Թերաքքը-ի ղեկավարները կը հասկնային օսմանեան ազգի ձեւաւորումը, որուն մէջ ձուլուելու պիտի գային Օսմանեան Կայսրութեան մէջ ապրող բոլոր ազգերը: Հնչակեան Կուսակցու-

¹ Ս. Ս. Գիւլեան. Պատասխանատուները, Պէրլին, 1974, էջ 151:

թիւնը կը գտնէր, թէ օսմանեան ազգ չկայ, այլ կայ Օսմանեան բազմազգ Կայսրութիւն, որուն մէջ ապրող բոլոր ազգերն ալ պէտք է հաւասար իրաւունքն ու միջոցները ունենան պահպանելու իրենց պատմա-անհատականութիւնը:

1902 Փետրուար 4-ին, Փարիզի մէջ տեղի կ'ունենայ օսմանեան ընդդիմադիր ուժերու Ա. Համաժողովը: Հնչակեան Կուսակցութիւնը «աւելորդ» կը նկատէ մասնակցիլ այդ ժողովին²: Համաժողովին կը մասնակցի հայ պատուիրակութիւն մը՝ կազմուած ՀՅԴ, Վերակազմեալ Հնչակեան եւ անկուսակցական գործիչներէ³:

Համաժողովէն հայ պատուիրակութիւնը դուրս կու գայ դժգոհ, հայկական նահանգներուն մէջ մասնակի բարեկարգութիւններ կատարելու շուրջ յառաջ եկած վէճերուն պատճառով: Այդ մասին «Հնչակ» պաշտօնաթերթը կը գրէ. «Գոնկրէսը կազմակերպողները, նրանց ջոջերը, տաճկական խորամանկ տիփլումադները այդ ապագայ խորամանկ գանտիտատները, գոնկրէսի հրաւիրեցին հայ յեղափոխականներին, որպէսզի, յանուն ընդհանուր բարենորոգումների, խեղդէին, ոչնչացնէին, ի սպառ անյէտ անէին քաղաքական աշխարհից հայկական դատը»⁴: Յաջորդող տարիներուն, երիտթրքական շարժման տարբեր թելերը, շարունակելով ժխտել հայ ազգային-ազատագրական շարժման առարկայական, օրինաչափ ծնունդը եւ մերժելով մասնակի բարեկարգութեան որեւէ ծրագիր, կը շարունակեն գործակցութեան եզրեր փնտռել հայ յեղափոխական կուսակցութիւններուն հետ:

1906-ի կէսերէն Բթթիհատ վերստին կը սկսի հետապնդել օսմանեան ընդդիմադիր ուժերով համաժողով գումարելու գաղափարը: Ժողովի նախապատրաստութեան ծիրէն ներս, Բթթիհատի առաջարկով, 1906 Յուլիսին Փա-

² Նույն տեղում, էջ 197:

³ Հնչակեան Կուսակցութիւնը իր Ա. Համագումարին (Լոնտոն, 1896 Սեպտեմբեր), կը պատակտուի երկու հատուածներու. «Հին Հնչակեան»՝ որ աւելի ուշ կ'անուանուի Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութիւն եւ «Վերակազմեալ Հնչակեան»՝ որ աւելի ուշ կը դառնայ ՌԱԿ-ի հիմնադրութեան բաղկացուցիչ մասերէն մէկը: 1902-ի դրութեամբ «հին» եւ «վերակազմեալ» հատուածները կը գործէին որպէս ինքնուրոյն կուսակցութիւններ: Առանց այս տարբերութիւնը նշելու՝ Անահիտ Տէր Մինասեան իր «The Role of the Armenian Community in the Foundation and Development of the Socialist Movement in the Ottoman Empire and Turkey, 1876–1923» ուսումնասիրութեան մէջ կը գրէ, թէ Հնչակեան Կուսակցութիւնը մասնակցեցաւ այս համաժողովին (M. T u n c a y, E. Z u r c h e r. Socialism and Nationalism in the Ottoman Empire, London, 1994, p. 137): Նոյն սխալը կը կրկնէ Հրաչ Տասնապետեան (Պատմութիւն Հայ Յեղափոխական Շարժման Եւ ՀՅ Դաշնակցութեան, Պէրոյթ, 2009, էջ 244):

⁴ Հ. Խ. Երիտասարդ Թուրքիա Եւ Երիտասարդ Հայաստան Անդակոնիզմը. – «Հնչակ», 1902, Մայիս 1:

րիզի մէջ տեղի կ'ունենան ՄԴՀԿ-Իրթօթիհատ բանակցութիւններ, որուն Իրթօթիհատի կողմէ կը մասնակցին Ահմատ Ռիզա, Պահաւտտին Շաքիր եւ տորթ. Նազիւ, իսկ Հնչակեան Կուսակցութեան կողմէ Սապահ Գիւլեան եւ Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճեան): Հինգ նիստերու ընթացքին կը քննարկուին Հայկական Դատ եւ համապետական ուղղութիւն, ինքնավար Հայաստան եւ Թուրքիա, դեմոկրատական սահմանադրութիւն եւ միդիատեան սահմանադրութիւն, հայկական խնդիր եւ արտաքին միջամտութիւն, ազգութիւն եւ օսմանցիութիւն եւ այլ օրակարգեր: Բոլոր հարցերով յառաջ կու գան խորը եւ անհաշտելի տարակարծութիւններ⁵: Օսմանեան ընդդիմադիր ուժերու Բ. Համաժողովին ընդառաջ Հնչակեան Կուսակցութիւնը հայ կուսակցութիւնները կը հրաւիրէ «Հայ Յեղափոխական Կօնգրէս»ի մը⁶, որ սակայն «վաղաժամ»⁷ կը նկատուի եւ ընդառաջում չի գտնէր:

«Հնչակ», հակադրուելով Հայկական Հարցը համապետական ծրագիրներու մէջ «խեղդելու» փորձերուն, կը գրէ. « Մենք ծրագիր չունենք ամբողջ Թուրքիան արմատապէս վերանորոգելու եւ նրա ամբողջականութիւնը պահպանելու, – այլ միայն մեր հայրենիքը, Հայաստանի այն մասը որ գտնուում է Թուրք պետութեան լծի տակ»⁸: Հնչակեան միւս օրկանը՝ ԱՄՆ-ի շրջանի «Երիտասարդ Հայաստան»ը, քննադատելով Իրթօթիհատի հետ գործակցութեամբ խանդավառները, կը գրէ. «Վաղը կամ միւս օր իսկ նոյն «յեղափոխական» թուրքերը չպիտի կասին կառավարութեան զօրքերի հետ յարձակում գործել հայերի վրայ եւ նորից ջարդ տալ սրանց (sic!), ինչպէս արին 1895–96 թւերին»⁹:

1907 Դեկտեմբեր 27–29, Փարիզի մէջ տեղի կ'ունենայ ընդդիմադիր ուժերու Բ. Համաժողովը: ՀՅԴ կարելոր դեր կը խաղայ անոր կայացման մէջ: ՄԴՀԿ-ը կը մերժէ մասնակցիլ անոր: Համաժողովը Օսմանեան Կայսրութեան բաղկացուցիչ ազգութիւններու պահանջներուն բնաւ չ'անդրադառնար եւ կը բաւարարուի համապետական բարեկարգութիւններու հարցերով, որուն շուրջ ներկաներուն միջեւ կը կնքուի համագործակցութեան դաշինք:

Հնչակեան մամուլը կը շարունակէ խիստ ոճով քննադատել համաժողովի արդիւնքն ու անոր մասնակիցները: Հնչակեաններուն այս կեցուածքը ջերմապէս կ'ընդունուի տարբեր ազգութիւններու ազատագրական շարժումներուն կողմէ՝ որոնք չէին մասնակցած Համաժողովին: 1908 Փետրուարին Ներքին

⁵ Ս. Ս. Գիւլեան. նշվ. աշխ., էջ 200–212:

⁶ Մուրատ. Աւելի Լաւ Է Ուշ, Քան Երբեք. – «Հնչակ», 1906, Սեպտեմբեր–Նոյեմբեր:

⁷ «Հնչակեան Կեդրոնի Դիմումը». – «Էրօջակ», 1907, Մայիս:

⁸ «Գալիքին Հանդէպ». – «Հնչակ», 1906, Սեպտեմբեր–Նոյեմբեր:

⁹ Գ. Եղիկեան. Կովկաս եւ Տաճկահայաստան. – «Երիտասարդ Հայաստան», 1907, Մայիս 8:

Մակեդոնական Յեդափոխական Կազմակերպութեան «Ilinden» եւ Անկախ Արաբիա կազմակերպութեան «L'indépendance Arabe» թերթերը կը տպագրեն Մապահ Գիւլեանի «Թրքական Բռնատիրութիւնը Եւ Երիտթուրքերը» ծաւալուն յօդուածը: Նոյն թուին Փարիզի մէջ լոյս կը տեսնէ Մապահ Գիւլեանի «Երիտասարդ Թուրքիա» աշխատութիւնը, ուր հեղինակը կը գտնէ թէ Երիտասարդ Թուրքերու հետ գործակցութիւն հնարաւոր է «միայն այն պարագային, երբ Թիւրքիայի բաղկացուցիչ բոլոր ժողովրդները կատարեալ ԻՆՔՆԱՎԱՐԱԿԱՆ ԻՐԱԲՈՒՐՆՔԸ եւ ընդհանուր Թիւրքիայի Ռամկավարական Մահմանադրութիւնը կ'ընդունուի որպէս սկզբունք»¹⁰:

1908 Յուլիս 11/24-ին սուլթան Ապտուլ Համիտ կը ստիպուի վերահաստատել իր իսկ կողմէ առկախուած սահմանադրութիւնը: Սա կը նկատուի յեղաշրջում օսմանեան քաղաքական կեանքին մէջ, որմէ յետոյ, ժամանակի ընթացքին, քայլ առ քայլ իշխանութիւնը ամբողջապէս կ'անցնի Իթթիհատի ձեռքը: ՄԴՀԿ-Իթթիհատ յարաբերութիւնները կը թեւակոխեն ամբողջապէս նոր հանգրուան մը:

Ի տարբերութիւն շատերու, Հնչակեան Կուսակցութիւնը խոր մտահոգութեամբ կ'ընդունի Մահմանադրութեան վերահռչակումը: Տարակոյսէ դուրս է որ, Մահմանադրական վարչակարգը անհամեմատ աւելի ընդունելի էր, քան համիտեան բռնատիրութիւնը: Սակայն Մահմանադրութիւնը հնարաւորութիւն կու տար, որ թուրք ազգայնականութիւնը մարմնաւորող Իթթիհատը հասնէր իշխանութեան: Մահմանադրութեան հռչակման առթիւ գրուած խմբագրականին մէջ «Հնչակ» կը գտնէ, թէ, իրերու այս նոր դրութեան մէջ, Իթթիհատ Վէ Թերաքքը կուսակցութիւնը դարձած է իշխանական կուսակցութիւն եւ անոր շնորհիւ «քաղաքական գործօն ասպարէզի եւ ղեկավարի դերի մէջ է մտնում թուրք նացիոնալիզմը ... որ զարգանալու համար քաղաքական աւելի ազատ պայմանների պէտք ունէր, քան ինչ որ տալիս էր համիտեան բռնապետութիւնը: ... Թուրք նացիոնալիզմը տիրապետող ժողովրդներին ազատութեան այնքան պայմաններ կտայ, որքան որ իր ընդգրկած նացիոնալիստական սկզբունքների շրջանակը կը ներէ.– այսինքն բաղկացուցիչ ժողովրդների ազգային զարգացումը պիտի մտնի այն շրջանակի մէջ, ինչ որ թուրք նացիոնալիզմը կը գծի: ... Մենք որպէս սոցիալիստներ դէմ կը լինենք «Երիտասարդ Թուրքիային», եթէ նա ցանկանայ մի ցեղի տիրապետութիւնը հաստատել միւսների վրայ: Ազգային խնդիրների տեսակետով՝ մեր դիրքը կը լինի մարտնչել, որ կողմից որ հարուածը գալու լինի, որպէսզի բաղկացուցիչ ազգութիւնները ունենան քաղաքական միեւնոյն իրաւունքները»¹¹:

¹⁰ Մ. Գիւլեան. Երիտասարդ Թուրքիա, Փարիզ, 1908, էջ 76:

¹¹ Մահմանադրական Թիւրքիա և Հայկական Խնդիր.– «Հնչակ», 1908, Յունիս–Յուլիս:

Այս մտահոգութիւնները միայն հնչակեան մամուլին մէջ չէ որ կ'երեւէին: Հնչակեան գործիչներուն մօտ անոնք շեշտուած էին եւ հրապարակ կու գային տարբեր առիթներով: Քսաններէն Ռուբէն Կարապետեան Մահմանադրութեան հռչակման առիթով Գահիրէի իր ընկերներուն կը գրէ. «Այժմ յեղափոխութիւնը (հայ ազգային-ազատագրական շարժումը.– Ե. Ճ.) աւելի լուրջ քայլեր պէտք է առնէ, մանաւանդ գտնուում ենք սահմանադրութիւն անուանուած մի թակարդի առաջը: Ներկայ Մահմանադրութիւնը ոչ այլինչ է, եթէ ոչ ազգերի ինքնուրոյն գաղափարը մեռցնելու եւ ազատագրական շարժումները ի սպառ խեղդելու. եթէ ճնշուող ազգերը մի տեսակ կամէութեամբ համակերպուին իրերի ներկայ դրութեան հետ, դա նշանակում է դատապարտել մեռելութեան քսան տարուայ այդքան գործը եւ նրանից շահած միջազգային առանձնաշնորհումները: Ո՞վ կը համաձայնուի կամովին սպանդանոց (sic!) գնալու, ոչ ոք»¹²:

1908 Օգոստոս 15-ին, Փարիզէն Կ. Պոլիս վերադարձի ճամբուն վրայ, Մապահ Գիւլեան եւ Մեծն Մուրատ քանի մը օրով կանգ կ'առնեն Սոֆիա, ուր հարցազրոյցներ կու տան օտար մամուլին¹³: Գերմանական «Vossische Zeitung» թերթին տուած հարցազրոյցին մէջ Ս. Գիւլեան կ'ըսէ թէ գոհ են եղած յեղաշրջումէն, սակայն անդադար պայքար պիտի մղեն ինքնավարութեան եւ դեմոկրատական կարգեր հաստատելու համար, «ըստ օրինակի բելգիականին եւ ձեռք բերի Մակեդոնիայի եւ Հայաստանի ավտոնոմիան, ըստ օրինակի Սամոս եւ Կրետե կղզիների, առանց սակայն վնասելու պետութեան միութեան»: Ան կ'աւելցնէ նաեւ, թէ հնչակեանները մտադիր են Կ. Պոսոյ մէջ ստեղծել կայսրութեան տարածքին գործող սոցիալիստական կուսակցութիւններու գործունէութիւնը համադրող, բազմազգ դեկավարութիւն մը¹⁴: Այս առիթով «Մշակ»-ի խմբագիր Համբարձում Առաքելեան հնչակեաններուն խորհուրդ կու տայ հետո մնալ չափազանցութիւններէն եւ «նպաստել երիտասարդութորքերի կուսակցութեան իրագործելու իր ծրագիրը, որ յամենայն դէպս, կու տայ բոլոր ժողովուրդներին կեանքի, գոյքի, պատուի եւ քաղաքացիական ազատ զարգացման ապահովութիւն»¹⁵:

¹² Ռուբէն Կարապետեանի նամակը Գահիրէի Հնչակեան մասնաճիւղին. 1908, Օգոստոսի 3.– Հնչակեան արխիւ (Պէրյուր):

¹³ Սոֆիացի. Հնչակեան Գործիչներ Բուլղարիայի Մէջ.– «Սուրհանդակ», 1908, Օգոստոս 16/29:

¹⁴ Հ. Առաքելեան. Զգուշացէք Չափազանցութիւններից.– «Մշակ», 1908, Օգոստոս 24:

¹⁵ Նույն տեղում:

Սահմանադրական կարգերուն տակ ՄԴՀԿ-ին առջեւ կը դրուի յեղափոխական-ընդդէմական գործելաձեւէն օրինական պայմաններու տակ գործելու գրեթէ պարտադիր հարցը: Հնչակեաններուն համար այդ կը դժուարանար կարելոք հանգամանգով մը: Օրինական պայմաններու տակ գործելու առաջին պահէն անոնք պէտք է դառնային իշխանութեան ընդդիմադիր, որովհետեւ իշխանութեան եկած Բթթիհատին մէջ անոնք կը տեսնէին թուրք ծայրայեղ «նացիոնալիզմը»՝ իր բոլոր հետեւանքներով: Միւս կողմէ, սակայն, իշխանութեան հանդէպ կոշտ ընդդիմութիւնը, գործնական քաղաքականութեան մէջ կը նշանակէր նպաստել հակասահմանադրական համիտեան ուժերուն, որոնք տակաւին կենսունակ էին:

1909 Մարտ 31/13 Ապրիլին տեղի կ'ունենայ յետաշրջական շարժում: Կը ծագի սահմանադրական կարգերը կորսնցնելու իրական վտանգ: Հայութիւնը, իր բոլոր հոսանքներով, կը կենայ Սահմանադրութիւնը պաշտպանելու կողքին: Կ. Պոլսոյ եւ արուարձաններուն մէջ հնչակեան եւ դաշնակցական զինեալ խումբեր կը մասնակցին Սահմանադրութիւնը վերահաստատելու համար մղուող կռիւներուն¹⁶: Այն պահուն, երբ հայութիւնը իր մասնակցութիւնը կը բերէր Սահմանադրութեան վերահաստատման պայքարին, տեղի կ'ունենայ Ատանայի Եղեռնը:

1909 Յուլիսին Կ. Պոլսոյ մէջ կը գումարուի ՄԴՀԿ Զ. Համագումարը: Ժողովը երկարօրէն կը քննէ Կուսակցութիւնը թուրքիոյ մէջ օրինական թէ՛ ոչ-օրինական գործելաձեւով առաջնորդելու հարցը եւ կ'որոշէ մնալ ընդդիմադիր Բթթիհատի իշխանութեան եւ անոր դէմ պայքարիլ օրինական ձեւերով՝ քաղաքական, քարոզչական, ընտրական եւ այլն: ՄԴՀԿ-ը Օսմանեան Կայսրութեան տարածքին կը դառնայ օրինական կուսակցութիւն, որուն համար Համագումարը կը մշակէ նոր ծրագիր եւ կանոնագիր: Զ. Համագումարը իր որոշումները կ'եզրակացնէ այսպէս. «Նկատելով որ թուրք նացիոնալիստները եւ այդ նացիոնալիզմի քաղաքական գործիչները զիտակցաբար ձգտում են ապագայնացնելու թուրքիայի մէջ գտնուող ազգութիւնները եւ նրանց ձուլելու թուրք ազգութեան մէջ ՕՍՄԱՆՏԻ, ՕՍՄԱՆԵԱՆ ԱԶԳՈՒԹԻՒՆ ընդհանուր անուան տակ, Սոցիալ-Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան Զ.րդ Ընդհանուր Պատգամաւորական Ժողովը ժխտելով ժխտում է ազգայնացման այդ գաղափարը եւ վճռում է ոգի ի բոլոր պայքարել այդ ուղղութեան դէմ՝ ընդունե-

¹⁶ Դէպքերու Մանրամասնութիւնները. – «Բիւզանդիոն», 1909, Ապրիլ 13/26, Հայ Կամաւորներ. – «Բիւզանդիոն», 1909, Ապրիլ 15/28, «Կոհակ», 1911, Ապրիլ 3/16, Ա. Սեւան. Յուշեր Մօտիկ Անցեալէն. – «Հայրենիք», 1931, Փետրուար, թիւ 4 (100), Հրատ. Անցեալի Յուշեր. – «Արարատ», 1986, Նոյեմբեր 8, G. Young. Constantinople, New York, 1992, p. 237.

լով ազգերի պատմա-անհատական գոյութեան անձեռնմխելիութիւնը եւ նրանց անկաշկանդ, ազատ զարգացման ու ինքնորոշման իրաւունքը»¹⁷:

Յաջորդող տարիներուն Հնչակեան Կուսակցութիւնը Իթթիհատի դէմ կը տանի քարոզական, քաղաքական եւ ընտրական հետեւողական պայքար մը. այդ օրերուն իր երէց գրչընկերներուն կը միանայ «Կայծ» ուսանողական ամսաթերթը, որուն խմբագիրը, Քսաններէն Վանիկ (Գեղամ Վանիկեան) կը գրէ. «Այսօր օրինակ մենք կ'ըսենք որ Իթթիհատ կուսակցութիւնը ազգայնական է. ինչո՞ւ, որովհետեւ կը ջանայ, եթէ ձեռքէն գայ, ջնջել Թուրքիոյ ոչ թուրք ազգութիւնները: Ուրեմն ազգայնականութիւն ըսել է ուրիշ ազգութիւններ չճանչնալ, զանոնք ձուլել իր մէջ ու իր ազգին բոլորովին առանձնաշնորհեալ դիրք տալ»¹⁸: Պայքարը իր սրութեան կը հասնի 1912-ի երեսփոխանական ընտրութիւններուն առիթով: Հնչակեան Կուսակցութիւնը կ'որոշէ ընտրապայքարը վերածել հակաիթթիհատական պայքարի միջոցի եւ մերժելով Իթթիհատին հետ գործակցելու շատ մը նպաստաւոր ընտրական առաջարկներ, դաշինքի մէջ կը մտնէ ընդդիմադիր Իթթիլաֆ Վէ Հուրիյէթ եւ Յոյն Սահմանադրական Քրուպիստ կուսակցութիւններուն հետ: Հայկական միւս հոսանքները կը շարունակեն «պետական կուսակցութեան» հետ գործակցելու իրենց ընթացքը: Իթթիհատին հետ ըլլալու կամ չըլլալու հարցով, պայքարը կը տեղափոխուի նաեւ ներհայկական կեանքէն ներս: Այս առիթով Կ. Պոլսոյ հնչակեան օրաթերթ «Նոր Աշխարհ» կը գրէ. «Հայաստանի վիճակը սրտին ունեցողը Իթթիհատին պախարակաց քուէ միայն կարող է տալ եւ ոչ թէ գործակցութեան յօժարութիւն:... Հայ ազգի իսկական շահերը կը թելադրեն Իթթիհատի դէմ ըլլալ: Մեր պարտականութիւնը այդպէս հասկցանք եւ դիրք բռնեցինք: Թէ որքան հեռատես եղանք եւ իրաւունք ունեցանք այդ դիրքը բռնելու, ուր որ ենք, դա մօտիկ ապագան ցոյց կու տայ, եթէ ներկան արդէն ցոյց չի տուել»¹⁹: Այս կապակցութեամբ Վանիկ լակոնական ոճով կը գրէ. «Բիւր ամօթ Իթթիհատի գործակիցներուն»²⁰:

Վերոյիշեալ պատմական ամփոփումը կը պարզէ որ, Հնչակեան Կուսակցութիւնը Իթթիհատին հետ ունեցած է գաղափարական եւ սկզբունքային լուրջ տարակարծութիւններ, որոնք ժամանակի ընթացքին խորացած են եւ այս պատճառով երկու կուսակցութիւններուն յարաբերութիւնները եղած են

¹⁷ ՄԴ Հնչակեան Կուսակցութեան Ջ. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի Գլխաւոր Որոշումները. – Հնչակեան արխիւ, Պէրոթ:

¹⁸ Վ ա ն ի կ. Կայծի թիւ 6-ի Հարցարանին Պատասխանները. – «Կայծ», 1911, Նոյեմբեր:

¹⁹ Ս. Գ ի լ է ա ն. Փարլամենտական Ընտրութիւնների Առիթով. – «Նոր Աշխարհ», 1912, Մարտ 24–25/6–7 Ապրիլ:

²⁰ Վ ա ն ի կ. Նամակ Կ. Պոլիսէն. – «Հնչակ», 1914, Մայիս:

թշնամական: Այս պատմական հեռապատկերին վրայ, կարելի է դիտարկել թէ քաղաքական ի նչ պայմաններ կը տիրէին 1913 Սեպտեմբերին:

1912 Յուլիսին ըմբոստ սպաներու խումբի մը (Հալասկերենի Չապիդան Կուրուբու) ճնշումներուն տակ Մայիտ փաշայի իթթիհատական դահլիճը կը հրաժարի եւ նոր վարչապետ կը նշանակուի Ահմէտ Մուխթար փաշան, որ իր կառավարութիւնը կը կազմէ հակա-իթթիհատական տարրերով: Օգոստոսին, ծերակոյտին որոշումով, իթթիհատական բացարձակ մեծամասնութիւն կազմող երեսփոխական Ժողովը Սուլթանին կողմէ կը լուծարուի: Բշխանութիւնը խաղաղ ձեւերով կ'անցնի Իթթիհատի ընդդիմադիրներուն ձեռքը: Հոկտեմբերին Մուխթար փաշայի կառավարութիւնը կը հրաժարի եւ վարչապետ կը նշանակուի անգլիասէր նկատուող Քամիլ փաշան: Անոր առաջին գործերէն կ'ըլլայ ձերբակալել Իթթիհատի ղեկավարները՝ ներառեալ Թալէաթ փաշան: Սա, լուրջ հարուած էր գերմանական շահերուն: 1913 Յունուարին լաւապէս կազմակերպուած պետական հարուածով մը Իթթիհատ կը վերադառնայ իշխանութեան: Յունիս 11-ին Իթթիլաֆ կը կազմակերպէ ձախող հակահարուած մը: Մեծ թիւով ընդդիմադիրներ կը ձերբակալուին եւ անոնցմէ 12 հոգի Յունիս 24-ին կախադան կը հանուի Սուլթան Պայագիտ հրապարակին վրայ: Ընդդիմադիր այլ գործիչներ, որոնց շարքին Սապահէտտին, Շերիֆ փաշա, Սատրգ, Ռաշիտ, Իսմայիլ Հաքքը եւ այլն, կ'ապաստանին արտասահման: Բշխանութիւնը կ'անցնի Իթթիհատի բռնակալ եռապետութեան ձեռքը. «Կարմիր եռապետութիւնը կը սկսի երկիրը ղեկավարել կարմիր սուլթան Համիտին նմանողութեամբ»²¹: Կայսրութեան մէջ թուրք ընդդիմադիր կեդրոնական ուժ մը կը դադրի գոյութիւն ունենալէ: Հրապարակի վրայ կը մնան աւելի փոքր ընդդիմադիր ուժեր, որոնց մէջ Հնչակեան Կուսակցութիւնը, որ սակայն ունէր յեղափոխական պայքարի փորձ եւ կազմակերպչական ցանց:

Յստակ կ'երեւէր, որ իշխանութեան համար մղուող այս արինտոտ պայքարը միայն ներքին պատճառներէ չէր բխեր: Աշխարհի քաղաքական քարտէզը բաժնուած էր երկու մեծ առանցքներու, որոնցմէ իւրաքանչիւրը կը ջանար իրեն զինակից ընել Օսմանեան Կայսրութիւնը: Իթթիհատ բացայայտօրէն կը շարունակէր Ապտուլ Համիտի գերմանասէր քաղաքականութիւնը, մինչ Իթթիլաֆ ունէր անգլիասէր կողմնորոշում:

Միւս կողմէ, Պալքանեան պատերազմը Իթթիհատի ղեկավարութեան մօտ յառաջ կը բերէ այն համոզումը, որ օսմանիզմի գաղափարախօսութիւնը անգոր է կայսրութեան ամբողջականութիւնը պահպանել: Օսմանիզմը ընդունելի չէր ոչ միայն քրիստոնէայ փոքրամասնութիւններուն կողմէ, այլեւ՝ ոչ-թուրք

²¹ Ա. Մ ա ն տ է լ շ թ ա մ. Երիտասարդ Թուրքերը Պատերազմէն Առաջ, Կ. Պոլիս, 1919, էջ 93-94:

իսլամ ազգութիւններուն կողմէ: Կայսրութիւնը պէտք է խարսխուած ըլլար հաւատարիմ միակ տարրը նկատուող թրքութեան վրայ: Պետական գաղափարախօսութիւն կը դառնայ «թիրքձիլիք»ի ազգայնամոլական, ռազմապաշտ գաղափարախօսութիւնը, որ միայն մէկ ոտնաչափ հեռու էր փանթուրանիզմի գաղափարախօսութենէն:

Միջազգային եւ տեղական այս պայմաններուն տակ կը գումարուի ՄԴՀԿ Է. Համագումարը: Փաստերը ցոյց կու տան, որ համագումարի կայացման մէջ եղած է շտապողականութիւն: Ժամանակը կը հալածէր: Մեծ պատերազմի մը թմբուկին ձայները կը լսուէին, որուն Օսմանեան Կայսրութիւնը կը պատրաստուէր մասնակցելու Գերմանիոյ կողքին, ազգայնամոլ եւ ռազմապաշտ իթթի-հատական եռապետութեան իշխանութեան տակ: Սա հայ ժողովուրդին եւ օսմանեան բոլոր ժողովուրդներուն համար միայն ողբերգական կրնար ըլլալ: Իշխանութիւնը փոխելու համար ո՛չ ընդդիմադիր ուժեր, ո՛չ ալ ժողովրդավարական միջոցներ գոյութիւն ունէին: Դժբախտաբար, ընդդիմադիր ուժեր չկային նաեւ հայութեան մէջ: Այս մասին Կ. Պոլսոյ պատրիարք Զաւէն արք. Եղիայեան կը վկայէ. «Երբ 1914-ի կիսուն կարգ մը յեղափոխականներ ձերբակալուելու վրայ էին, հետաքրքիր եղանք իմանալու շարժառիթը: Եւ երբ վերահասու եղանք Թալաթի անձին դէմ դաւադրական փորձին, քաղաքական կուսակցութիւններէն մինչեւ օրուան ազգային վարչութիւնը, նոյնիսկ ես, քննադատեցինք ձերբակալուած հնչակեանները, վասնզի ամէնքս ալ այն համոզումը գոյացուցած էինք թէ Թալեաթ կը սիրէր հայերը եւ միշտ ժպտուն դէմքով մը կ'ընդունէր զիս եւ վարչութենէն իրեն ներկայացող անձերը: “Այդ ժպիտը կեղծ է, մի խաբուիք” խօսէր էին այդ Քսանները: Եւ ժամանակը փաստեց թէ անոնք որ կախուէր էին հուսկ ապա, մեր բոլորէն, ամենէն ճիշդն էին ըմբռներ»²²:

Բռնապետական իշխանութիւնը փոխելու ժողովրդավարական ձեւերու բացակայութեան պայմաններուն տակ եւ այդ իշխանութեան կողմէ պատերազմի մէջ մտնելու վտանգին հանդիման համագումարը կ'որոշէ. «Նկատելով որ Տաճկաստանի մէջ տիրապետում է մի ՕԼԻԿԱՐԽԻԱ, որի ղեկավարիչ ոյժն է Իթթիհատ Վէ Թերաքքը Կուսակցութիւնը: Որոշ լինելով որ այդ Կուսակցութեան հիմնական սկզբունքներն են պահել թրքական բիրօկրատիան, թոյլ չտալ որ նորագոյն Պետութիւն յառաջանայ ու նրա դիտաւորութիւնն է բաղկացուցիչ ազգութիւնները ձուլել, ոչնչացնել ի հարկին եւ կոտորել (sic!): Անվիճելի համարելով, որ իշխանութիւնը իր ձեռքում ունեցող Տիրող Դասակարգը իր հայակործան քաղաքականութիւնը սիստեմադիկ եւ անողոք կերպով

²² Վկայութիւններ Քսաններուն Մասին.– «Արարատ Երիտասարդական», 1985, Յունիս:

յառաջ է տանում...», կ'որոշէ վերադառնալ գործունէութեան յեղափոխական ձեւերուն եւ «պաշտպանել ԻՆՔՆԱՎԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԱՂԱՓԱՐԸ՝ ԵԻՐՈՊԱ-ԿԱՆ ԿՕՆՏՐՈԼՈՎ»²³:

Կը սկսի Համագումարի որոշումները՝ յատկապէս անոր յեղափոխական մասը գործադրութեան դնելու նախապատրաստութեան փուլը: Նորընտիր Կեդրոնական Վարչութեան՝ Սապահ Գիւլեան, Փարամազ (Մատթէոս Մարգիսեան), Վարագդաստ (Յակոբ Թիւրապեան) կողքին, կը կազմուի յեղափոխական գործունէութեան յատկազօր կազմող եւ գործադրող մարմին մը, որուն մաս կը կազմեն Փարամազ, Տոքթ. Պէննէ (Պետրոս Թորոսեան), Ռուբէն Կարապետեան (Վահան Պոյաճեան) եւ Ս. Վահագն (Գրիգոր Նալպանդեան): Այս մարմինը կապ կը պահէ եւ գործերը կը համադրէ թուրք վտարանդի ընդդիմադիրուն հետ: Վերջիններուս պարագլուխներէն Շերիֆ փաշայի²⁴ միջոցով կապ կը հաստատուի նաեւ անգլիական իշխանութեան հետ, որ իր համաձայնութեան կողքին կը տրամադրէ նաեւ որոշակի օժանդակութիւն: Անարգ դաւաճանութիւնը սակայն ի թերեւ կը հանէ ամէն բան: Ամէն ինչ կ'աւարտի հնչակեաններուն ձերբակալութեամբ, Քսան Կախադաններով եւ հուսկ՝ Հայկական Յեղասպանութեամբ:

Առաջին իսկ առիթով Իթթիհատի եռապետութիւնը կը փորձէ նախաձրագրուած ցեղասպանութեան մեղքը բարդել ցեղասպանութեան զոհին ուսերուն: Այդ նպատակին համար ան կը փորձէ լայնօրէն օգտագործել ՄԴՀԿ 7-րդ Համագումարին որոշումներն ու Քսաններուն դատաւարութիւնը: Դիտումնաւոր ձեւով դատաւարութիւնը կը զուգակցուի Ապրիլ ամսուան: Դատաւարութեան մասին Իթթիհատի օրկան «Թանին», 1915 Ապրիլ–Մայիս ամիսներուն կը տպագրէ «Քաղաքական Կատակերգութիւն Մը» թունալից եւ հայատեաց երկար յօդուածաշարքը, որ կը թարգմանուի Կ.Պոլսոյ մէջ լոյս տեսնող գեր-

²³ ՄԴ Հնչակեան Կուսակցութեան Է. Ընդհանուր Պատգամաւորական Ժողովի Կարեւոր Որոշումներէն.– «Հնչակ», 1914, Մայիս:

²⁴ Ապաստանելով Փարիզ՝ Շերիֆ փաշա կը խմբագրէ ընդդիմադիրներու օրկան «Mechroutiel»-ը: Ան, հաւանաբար թուրք առաջին քաղաքական գործիչը ըլլալով, 1915-ին հրապարակայնօրէն կը դատաւարտէ Հայկական Յեղասպանութիւնը: 1915 Սեպտեմբերին «Journal de Geneve»-ի մէջ գրած իր յօդուածին մէջ, բարձր գնահատելէ ետք հայ ժողովուրդին բերած նպաստը Օսմանեան Կայսրութեան առեւտուրին, արդիւնաբերութեան, գիտութեան եւ արուեստներուն զարգացման, Շերիֆ փաշա կ'եզրակացնէ.– «Արդ՝ մտածել, որ այսպէս լաւ օժտված մի ժողովուրդ, որ բարերար մի շաղախի դեր է կատարել օսմանեան կայսրութեան վերանորոգման համար, պատմութիւնից անհետանալու վրայ է, եւ ոչ միայն ստրկացած, ինչպէս հրէաները ասորեստանցիների օրով, այլ բնաջնջված է, պէտք է արիւնտով ամենաանոգայ սրտերը» (Շերիֆ-Փաշան Հայկական Ջարդերի Մասին.– «Մշակ», 1915, Հոկտեմբեր 7):

մաներէն «L’Osmanischer Lloyd» թերթին կողմէ: Նոյն նպատակով ներքին գործոց նախարար Թալաաթ «մահաշունչ»²⁵ ուղերձ մը կը յղէ Քսաններու դատավարութեան, գոր կը կարդացուի դատարանին մէջ: Թալաաթ իր նպատակներուն մէջ այնքան յառաջ կ’երթայ, որ դատուող հնչակեանները կը մեղադրէ Վանի եւ Շապին Գարահիսարի ինքնապաշտպանութիւնները (իր խոսքով՝ ապստամբութիւններ.– Ե. Ճ.) կազմակերպելու յանցանքով... երբ անոնք ձերբակալուած էին այդ դէպքերէն 9-ը ամիս առաջ: Օսմանեան վարիչներու այս թաքուն նպատակներուն մասին առաջինը կ’անդրադառնայ Եռհաննէս Լէփսիուս²⁶: Աւելորդ է ըսել, որ կուսակցութեան մը կողմէ առնուած եւ տակաւին գործադրութեան չդրուած որոշումներուն համար անհետք է ամբողջ ժողովուրդի մը ցեղասպանութիւնը արդարացնելու փորձը, մանաւանդ, երբ ինքը՝ Բթթիհատ, երեք անգամ արիւնայի յեղաշրջումներով իշխանութեան տիրացած էր:

Թրքական այս պաշտօնական կարծիքին զուգահեռ, թէ՛ անցեալին եւ թէ՛ ներկայիս եղած են թրքական կարծիքներ, որոնք կը պնդեն թէ օսմանեան ժողովուրդներուն համար բարեբախտութիւն մը կ’ըլլար, եթէ հնչակեանները յաջողէին իրենց ծրագիրին մէջ: 1915-ին թուրք պետական գործիչ Գոնիալի Մուսթաֆա ապագային կ’ըսէ. «Ձեր ազգին տունը Հնչակ կոմիտէն քանդեց, երբ Փարամազ Պոլիս դրկելով՝ ուղեց սպաննել Էնվեր եւ Թալեաթ փաշաները: Աստուած տար որ յաջողէր, թէ հայերը եւ թէ մեր հայրենիքը այսօր թերեւս ազատ ըլլային այս դժբախտութենէն: Դուք կը կարծէք թէ միայն հայերը դժբախտ եղան: Ոչ, ամբողջ Անատոլիան այսօր աւերակ է, եւ իսլամ ժողովուրդը անօթի ու հիւանդ»²⁷: Դեռ շատ վերջերս թուրք հասարակական գործիչ Ռակիպ Չարաքօլու իր կայքէջին վրայ կը գրէր, թէ առ նուազն երեք միլիոն մարդ պակաս կը զոհուէր Համաշխարհային Ա. Պատերազմին, եթէ Քսանները գործադրէին իրենց ծրագիրը: Այս բոլորը անշուշտ պատմական եթէ-ներ են, իսկ պատմագրութիւնը չի սիրէր եթէ-ներով զբաղիլ: Պատմագրութիւնը կը սիրէ զբաղիլ պատմութեան մէջ եղած, կատարուած, փաստացի հարցերու մեկնաբանութեամբ: Այս դիտանկիւնէն կ’ուզեմ մէջբերել Ս. Գիւլեանի մէկ դատողութիւնը՝ լոյս տեսած 1912 Սեպտեմբերին. «Մարդ արտաքոյ կարգի ուղեղ պիտի ունենայ, մինչեւ ցարդ դրականապէս համոզուած չլինելու համար՝ որ Բթթիհատը, ... պարզ, մեկին, որոշ ձգտում, պատմական տիրուր միսիա ունի. այս երկրի բաղկացուցիչ բոլոր ազգութիւնները ջնջել՝ ուժի վրայ յենած պետական մեքենայի եւ թրքական քաղաքակրթական միջոցներով,– այսինքն

²⁵ Հ. Արամեանց. Անկախ Հայաստան, հ. Գ., Կ. Պոլիս, 1919, էջ 14:

²⁶ Ե. Լէփսիուս. Գաղտնի Տեղեկագիր. Հայ Ժողովուրդի Չարդերը, Երևան, 2003:

²⁷ Ս. Թորգոմեան. Աղէտայի Որոշումը.– «Հայրենիք», 1937, Փետրվարի 24:

մասնակի եւ զանգուածային ջարդերով (sic) եւ այլ պատմական հնարիմացութիւններով ...: Հայ ազգի գոյութիւնը նա վտանգ է համարել օսմանեան պետութեան մնայուն շահերին եւ նա այդ վտանգը հեռացնելու պատմական պարտականութիւնը վրան է առել ...»²⁸: Երօք, այդ «պատմական պարտականութեան» էական մասը իրականացնելէ, իր «տխուր միսիան» աւարտելէ ետք, Բթթիհատ եւս կ'անցնի պատմութեան գիրկը:

Դժբախտաբար, Ս. Գիւլեանի քաղաքական հեռատեսութիւնը շուտով իրականութիւն կը դառնայ:

ПОЛИТИЧЕСКАЯ ОЦЕНКА ДВАДЦАТИ ВИСЕЛИЦ ГНЧАКОВ

ЕГИК ЧЕРЕЧЕАН (БЕЙРУТ)

Резюме

Враждебные отношения между социал-демократической партией Гнчакян (СДПГ) и партией Иттихат ве теракки начались в 1895 г. Главной причиной этого явилась идеология «османизма», проводимая Иттихатом. После принятия османской Конституции в 1908 г. Иттихат становится партией власти. СДПГ в 1909 г. в Османской империи приобретает статус законной партии и остается в оппозиции к иттихатскому правительству. Это нашло отражение в органах печати гнчаков «Гнчак», «Молодая Армения», «Новый мир», «Кайц». В 1913 г. утверждается диктатура триумvirата Иттихата, и националистическая идеология «туркчулук» становится государственной. Было очевидно, что правительство готовится к большой войне, что, безусловно, стало бы трагедией для западных армян и всех народов, проживавших на территории Турции. В этих условиях на 7-м съезде СДПГ, проведенном 1–10 сентября 1913 г. в городе Констанца (Румыния), было принято решение вернуться к революционным действиям. В этом вопросе гнчаки сотрудничали с изгнанными турецкими оппозиционерами и английскими властями. Однако всему помешало предательство. 17 июля 1914 г. были арестованы около 120 гнчаков, 20 из которых 15 июня 1915 г. были повешены в Константинополе. Около 35-и арестованных гнчаков были казнены в разных областях. Иттихатские власти пытались использовать решения 7-го съезда СДПГ и судебный процесс 20-и, чтобы замаскировать продуманный заранее геноцид, который они осуществили по отношению к армянскому народу. Как в прошлом, так и сегодня, турецкие политические деятели считают, что для Турции было бы большой удачей, если бы гнчаки преуспели в своем начинании.

²⁸ Ս. Գիւլեան. Պատրիարքարանի Հրահանգների Առթիւ.– «Նոր Աշխարհ», 1912, Սեպտեմբեր 6/19:

THE POLITICAL APPRECIATION OF THE TWENTY HANGED
HENCHAK MARTYRS

YEGHIG DJEREDJIAN (BEIRUT)

S u m m a r y

The hostile relations between the Socialist Democratic Henchak (SDHP) and Ittihad Ve Terakke (CUP) Parties began in 1895 and continued after the declaration of the 1908 Constitution, when SDHP became an opposition party. The main reason of this hostility was the ideology of Ottomanism of Ittihad Party. The Henchak press, such as “Henchak”, “Yeridasart Hayasdan”, “Nor Ashkharh” and “Gaidz” had often discussed this issue. In 1913 CUP establishes the dictatorship of the trinity. On the other hand, “Turkjuluk” became the state ideology. It was clear that the CUP government was in preparation to enter a big war, which, undoubtedly, would be catastrophic to the Armenians and all other nations, living in Turkey. Regarding these realities, the 7th General Congress of SDHP, that was held in Constanza, Romania, 1–10 September, 1913, mainly decided to return the party to its revolutionary activities. On this subject, the Henchaks cooperated with the Turkish opposition in emigration and the British. The decisions of the Congress were failed because of treason. On July 17, 1914, about 120 Henchaks were arrested. 20 of them were tried and on June 15, 1915, were hanged in Sultan Bayazid Square, in Constantinople. More than 35 Henchaks were also condemned for pursuing the idea of free Armenia and executed in different regions. The Ittihadist regime tried to utilize the decisions of the SDHP 7th Congress and the trial of the 20 Henchak martyrs in order to cover and justify the premeditated Genocide perpetrated on the Armenian people. As in the past, in the present as well, Turkish political activists regard that it would be very fortunate for Turkey if the Henchaks succeeded in their plans.